Ռուս-թուրքական էներգետիկ մրցակցությունը Հարավային Կովկասում

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Հեռանկարային հետազոտությունների և նախաձեռնությունների կենտրոն

Հոդվածում քննարկվում է ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստան-Թուրքիա աշխարհաքաղաքական և առևտրատնտեսական շահերի բախումը Հարավային Կովկասում՝ հիմնվելով կասպիական էներգետիկ ռեսուրսների երթուղիների վերահսկման շուրջ առաջացած ռուս-թուրքական մրցակցության վրա: Ուժերի իրական վերադասավորումը հասկանալու համար անդրադարձ է կատարվում նաև հարավ-կովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների ազդեցությանը տարածաշրջանում ծավալված աշխարհաքաղաքական պայքարի վրա: Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ հետսառը-պատերազմյան առաջին տասնամյակում կասպիական էներգետիկ ռեսուրսների տեղափոխման ուղիների վերահսկման շուրջ առաջացած ռուս-թուրքական պայքարի արդյունքում հաջողություններ ունեցավ Թուրքիան, ինչը հանգեցրեց երկկողմ հարաբերություններում լարվածության ի հայտ գալուն: Այնուամենայնիվ, աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում Ռուսաստան-Թուրքիա էներգետիկ մրցակցությունը աստիճանաբար վերափոխվեց համագործակցության և վերածվեց աշխարհառազմավարական գործոնի՝ կայունացնող դերակատարություն ունենանալով երկկողմ հարաբերությունների մերձեցման գործում: 2020թ. սեպտեմբերին Արցախի նկատմամբ Ադրբեջանի սանձազերծած և Թուրքիայի լայնածավալ անմիջական ներգրավմամբ ռազմական ագրեսիայի արդյունքներից է մեծապես կախված լինելու ռուս-թուրքական էներգետիկ համագործակցության/մրցակցության վերջնարդյունքը:

Բանալի բառեր
Ռուսաստան, Թուրքիա, աշխարհաքաղաքական մրցակցություն, համագործակցություն, էներգակիրներ, կասպյան ավազան, Հարավային Կովկաս

Նախաբան

20-րդ դարի ավարտին ստեղծվեց միանգամայն նոր աշխարհաքաղաքական իրավիճակ, որը պայմանավորված էր «Սառը պատերազմի»

արդյունքում երկբևեռ աշխարհարարգի բևեռներից մեկի՝ Խորհրդային միության փլուզմամբ: Ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում ի հայտ եկան մի շարք հնարավորություններ և մարտահարավերներ ազդեցիկ տերություն-ների համար աշխարհաքաղաքական ազդեցության գոտիների վերաձևավորման գործում: Հարավային Կովկասը, սահմանակից լինելով տարածաշրջանային ազդեցիկ դերակատարների՝ Ռուսաս-տանի, Իրանի, Թուրքիայի, ինչպես նաև ռազմավա-րական մեկ այլ կարևոր տարածաշրջանի՝ Մերձավոր Արևելքի հետ և գտնվելով Եվրոպայի ու Ասիայի խաչմերուկում, ԽՍՀՄ փլուզումից հետո դարձավ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանի աշխար-հաքաղաքական մրցակցության ծավալման թեժ թատերաբեմերից մեկը: Մասնավորապես, Հարավային Կովկասում ազդեցության հաստատ-ման ուղղությամբ առավել ակտիվ քաղաքականություն են իրականացնում Ռուսաստանն ու Թուրքիան: Այդ պետությունների հետաքրքրությունը պայմանավորված է տարածաշրջանի աշխարհա-քաղաքական և ռազմավարական հսկայական նշանակությամբ՝ կապված տարածաշրջանի աշխարհագրական դիրքով, տարանցիկ գոտի լինելու հանգամանքով և բնական ռեսուրսների առկայությամբ:

Ռուս-թուրքական հարաբերություններն ունեն բարդ և հակասական բնույթ՝ ունենալով էական առանձնահատկություն: Քանի որ երկու երկրներն էլ միջազգային հարաբերություններում ունեն լուրջ բարդություններ, նրանցից յուրաքանչյուրի համար միմյանց հետ հարաբերությունները կարևոր են՝ չնայած որոշ հարցերում առկա լուրջ տարաձայնություններին: Դա է պատճառը, որ ռուս-թուրքական հարաբերությունները միաժամանակ և՛ մրցակցային են, և՛ համագործակցային:[1]

Հոդվածում դիտարկվում է հարավկովկասյան տարածա-շրջանում ծավալվող ռուս-թուրքական աշխարհաքաղաքական պայքարը և դրանում էական տեղ զբաղեցնող տարաշրջանում էներգետիկ ծրագրերի իրականացումը: Էներգետիկ ռեսուրսների

[1] **Թորոսյան Տ., Արշակյան Գ.,** Ռուս-թուրքական մրցակցություն, թե՞ համագործակցություն, *Հայկական քաղաքագիտական հանդես,* 2016, 1, 5-34.

երթուղիների զարգացումն այս տարածաշրջանում բացառիկ տնտեսական և ռազմավարական նշանակություն ունի: Բացի այդ, էներգետիկ ոլորտը այսօր ստացել է ընդգծված աշխարհաքաղաքական բնույթ և ժամանակակից միջազգային հարաբերությունների համակարգի անքակտելի բաղադրիչներից է:

Ռուս-թուրքական աշխարհաքաղական մրցակցությունը Հարավային Կովկասում

Հարավային Կովկասը ռազմավարական, աշխարհաքաղաքական, տնտեսական և անվտանգային առումով հսկայական նշանակություն ունի ինչպես Մոսկվայի, այնպես էլ Անկարայի համար: Լինելով ժամանակին Ռուսական կայսրության, ապա՝ Խորհրդային միության մաս՝ այս տարածաշրջանն առանձահատուկ դեր է ունեցել պետության արտաքին քաղաքականության օրակարգում: Ի տարբերություն այլ տարածաշրջանների՝ Հարավային Կովկասը Ռուսաստանի կողմից մշտապես դիտարկվել է որպես ռուսական «կենսական շահերի» գոտի[2]: Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուսաստանը բախվել էր բազմաթիվ ներքին և արտաքին մարտահրավերների՝ կապված պետականաշինության և երկրի զարգացման ռազմավարության ընտրության հետ: Թերևս, սա է պատճառը, որ Մոսկվան 1990-ականների սկզբին ակտիվորեն ներգրավված չէր հարավկովկասյան նորանկախ պետություններում ընթացող քաղաքական գործընթացներում, որի արդյունքնում տպավորություն էր ստեղծվել էր, որ տարածաշրջանում ռուսական ազդեցության թուլացման արդյունքում ձևավորվում է քաղաքական վակուում: Եթե խորհրդային տարիներին այս տարածաշրջանը համարվում էր բացառապես ռուսական ազդեցության գոտի, ապա ԽՍՀՄ փլուզման արդյունքում ստեղծվեց մի իրավիճակ, երբ Հարավային Կովկասում սկսեցին ի հայտ գալ նոր խաղացողներ՝ ի դեմս Թուրքիայի, Իրանի և ԱՄՆ-ի, ովքեր, օգտվելով թվացյալ քաղաքական վակուումից, փորձում էին իրենց դիրքերը ամրապնդել

[2] **Нейшн Р. К.**, Россия и Кавказ, *Connections. The Quarterly Journal*, Весна 2015, **14**, 2, 1-14.

տարածաշրջանում: Այնուամենայնիվ, Ռուսաստանին ամենից շատ մտահոգում էր տարածաշրջանի նկատմամբ Թուրքիայի հետաքրքրությունը, որը Ադրբեջանի միջոցով ձգտում էր իր ազդեցությունը հաստատել:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա 1990-ական թվականներին Անկարան, օգտվելով ԽՍՀՄ փլուզումից հետո կովկասյան տարածաշրջանում առաջացած քաղաքական վակուումից, նպատակ ուներ թուլացել Ռուսաստանի ազդեցությունը Հարավային Կովկասում, և հիմնվելով պանթյուրքիստական գաղափարախոսության վրա, իր ազդեցությունը հաստատել ոչ միայն Հարավային Կովկասում, այլ Կենտրոնական Ասիայի նորանկախ հետխորհրդային մահմեդական հանրապետություններում: Ըստ Թուրքիայի նախկին նախագահ Ս. Դեմիրելի՝ կովկասյան տարածաշրջանը Թուրքիայի համար ունի ռազմավարական նշանակություն, քանի որ այն միավորում է Թուրքիան Կենտրոնական Ասիայի հետ[3]: Եվ թեև տարբեր էին հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում Թուրքիայի առաջնորդների տեսակետները, այդ դիրքորոշումը ընդհանուր էր:

Հարավային Կովկասում ռուս-թուրքական մրցակցության դրսևորումներում կարևոր տեղ էին զբաղեցնում հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները, որոնք գրեթե միաժամանակ բռնկվեցին ԽՍՀՄ փլուզումից հետո: Արցախյան և Աբխազիայի հակամարտություններում Թուրքիան և Ռուսաստանը աջակցում էին պատերազմող հակադիր կողմերի և հակամարտու-թյունները ընկալում էին որպես աշխարհաքաղաքական ազդեցության հաստատմանն ուղղված միջոց: Արցախյան պատերազմի տարիներին Ռուսաստանը ձգտում էր կանխել Ադրբեջանի միջոցով տարածաշրջան ներթափանցելու Թուրքիայի հնարավոր փորձերը: Բացի այդ, ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանում Ա. Էլչիբեյի գլխավորությամբ իշխանության էին եկել հակառուսական ուժեր, որոնց իշխանության տարիներին Ադրբեջանը սկսեց խորացնել իր

[3] **Demirel S.**, Turkey Towards 1997. The Developments in 1996 and the Goals of 1997, 28 December 1996, https://www.tccb.gov.tr/konusmalari-suleyman-demirel/1718/4080/address-by-his-ee-21st-congregation-of-the-urkish-grand-national-assembly, (07.01.2020).

հարաբերությունները Թուրքիայի հետ: Այդ շրջանում Բաքուն նույնիսկ հրաժարվում էր անդամակցել ԱՊՀ-ին[4]:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այն չէր կարող անտարբեր մնալ Արցախյան հակամարտության նկատմամբ, քանի որ Ադրբեջանը, պատմամշակութային, լեզվական, կրոնական և քաղաքական սերտ կապեր ունենալով Թուրքիայի հետ, առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ[5]: Ադրբեջանի միջոցով Թուրքիան ձգտում էր ներթափանցել հարավկովկասյան տարածաշրջան, որտեղ, ի տարբերություն Ռուսաստանի, նա ազդեցության հաստատման փորձ չի ունեցել: Ինչպես արդեն նշվել է, Հարավային Կովկասի միջոցով Անկարան նպատակ ուներ կապ հաստատել միջինասիական թյուրքալեզու մահմեդական պետությունների հետ: Ավելին, Թուրքիայի համար կարևոր էին նաև Ադրբեջանի էներգետիկ ռեսուրսները, որոնց արտահանման ուղիների վերաբերյալ Անկարան ունի սեփական ծրագրերը[6]: Ըստ Թուրքիայի՝ Արցախ-յան հիմնահարցը Ադրբեջանի տարածքային ամբողջականության և կայունության սպառնալիք է և այն պանթյուքիստական գաղափարախոսության և դրա վրա հիմնված ծրագրերի իրագործմանը խոչընդոտող գործոն, ուստի չէր կարող իր շահագրգռվածությունը չցուցաբերել հակամարտության կարգավորման ուղղությամբ:

Ինչպես երևում է, Մոսկվան և Անկարան Արցախյան հակամարտությունում ունեին հակասող հետաքրքրություններ, ուստի շահերի բախումը անխուսափելի էր: Հակամարտության ժամանակ երկու պետությունների բարձաստիճան պաշտոնյաներ հնչեցնում էին միմյանց մեղադրող կոշտ հայտարարություններ: 1993-ին Թուրքիայի նախագահ Օզալը մեղադրեց Ռուսաստանին հայկական կողմին աջակցելու գործում և հայտարարեց, որ Թուրքիան կուժեղացնի

---

[4] **Гребенников Е., А.,** Международное сотрудничество России и Азербайджана в годы правления Народного фронта Азербайджана (1992-1993 гг.): проблемы и вызовы, *Историческая и социально-образовательная мысль,* 2017, **9** , 2-3, 42-51.

[5] **Balci B.,** Strengths and constraints of Turkish policy in the South Caucasus, *Insight Turkey*, Volume 16 (2), 2014, pp. 43-52.

[6] **Yesevi C., Tiftikçigil B.,** Turkey-Azerbaijan Energy Relations: A Political and Economic Analysis, *International Journal of Energy Economics and Policy*, 2015, **5**, 1, 27-44.

ռազմական աջակցությունն ադրբեջանական կողմին և զորքեր կուղարկի: Ի պատասխան, Ռուսաստանի պաշտպանության նախարարը Պ. Գրաչովը Անկարա պաշտոնական այցի ժամանակ, զգուշացրեց Թուրքիային զերծ մնալ այդպիսի քայլերից[7]: Ռուսաստանի համար բացարձակապես անընդունելի էր հակամարտությունում Թուրքիայի ցուցաբերած շահագրգռվածությունը, քանի որ Մոսկվան Հարավային Կովկասը համարում է բացառապես իր ազդեցության գոտի: Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում Ռուսաստանն ու Թուրքիան աստիճանաբար սկսեցին հանդես գալ որպես միմյանց նկատմամբ վտանգ ներկայացնող պետություններ:

Պատերազմում հայկական կողմի հաղթանակը, ինչպես նաև Մոսկվայի միջնորդությամբ զինադադարի հաստատումը հանգեցրեցին տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության ամրապնդմանը: Արդյունքում՝ կասեցվեց Թուրքիայի հնարավոր ազդեցության հաստատումը հարավկովկասյան տարածաշրջանում: Հաջորդ լուրջ փորձն Անկարան ձեռնարկեց 2020թ.-ին՝ Ադրբեջանի հետ իրականացնելով ռազմական ագրեսիա Արցախի դեմ: Ընդ որում, այս անգամ դա արվում է տարբեր զինատեսակների կիրառմամբ և Սիրիայից ահաբեկիչների ներգրավումով: Ամենայն հավանականությամբ Թուրքիայում տեսնում են, որ նոր աշխարհակարգի ձևավորումը մոտ է ավարտին[8] և փորձում են վերջին ճիգով լուծել իրենց համար կարևոր նշանակություն ունեցող հարցը:

Վրաց-աբխազական հակամարտությունը ևս առանցքային տեղ է զբաղեցնում Հարավային Կովկասում ռուս-թուրքական աշխարհաքաղաքական մրցակցության շրջանակներում: Ռուսաստանի ներգրավվածությունը վրաց-աբխազական պատերազմում պայմանավորված է ռազմավարական, աշխարհաքաղաքական և տնտեսական մի շարք գործոններով: Գտնվելով Սևծովյան ավազանում՝ Աբխազիան մշտապես աշխարհաքաղաքական մեծ կարևորություն է ներկայացրել Ռուսաստանի համար և պատահական չէ, որ Ռուսաստանը այստեղ

[7] **Демоян Г.,** Турция и Карабахский конфликт в конце XX – начале XXI веков. Историко-сравнительный анализ, Авторское издание, Ереван, 2006, с. 116

[8] **Թորոսյան Տ.**, **Վարդանյան Ա.,** Եվրասիական կենտրոնի մեծ աշխարհաքաղաքական վերաբեռնավորման ավարտը, *Հայկական Քաղաքագիտական Հանդես,* 2020, 1, 5-52:

տեղակայել էր ռազմական ստորաբաժանումներ՝ ամրապնդելով իր ներկայությունն ինչպես տարածաշրջանում, այնպես էլ Սև ծովում:

Վրաց-աբխազական հակամարտությունում Մոսկվան ձգտում էր ստանձնել միջնորդի դերակատարություն, ինչը հնարավարություն կտար Ռուսաստանին ամրապնդելու իր դիրքերը Վրաստանում, քանի որ 1990-ականների կեսերին Վրաստանի նկատմամբ արևմտյան պետությունների ցուցաբերած ակտիվ հետաքրքրությունը կասպյան ավազանի էներգետիկ ռեսուրսներով պայմանավորված լուրջ մտահոգություններ էր առաջացրել Ռուսաստանում: Ավելին, տարածաշրջանում անկայուն վիճակը լուրջ սպառնալիք և ապակայունության պատճառ կարող էր հանդիսանալ Ռուսաստանի կազմում գտնվող Հյուսիսային Կովկասի հանրապետությունների համար ևս[9]: Այդ է պատճառը, որ Մոսկվան ակտիվորեն ներգրավվեց հակամարտության կարգավորման գործընթացում և աբխազական կողմի ռազմական հաղթանակի շնորհիվ իր միջնորդությամբ 1994 թվականին Վրաստանի և Աբխազիայի միջև ստորագրվեց հրադադարի համաձայնագիրը:

Ի տարբերություն Արցախյան հակամարտության, աբխազական հակամարտությունում Թուրքիայի դիրքորոշումը միանշանակ չէր և Անկարան կանգնել էր լուրջ երկընտրանքի առջև: Թե՛ Վրաստանը, թե՛ Աբխազիան մեծ կարևորություն էին ներկայացնում Անկարայի համար[10]: Թուրքիայի համար կարևոր էր Վրաստանի աշխարհագրական դիրքը, որը կապող օղակ էր Ադրբեջանի և Թուրքիայի միջև: Վրաստանը ևս կարևորում էր Թուրքիայի հետ հարաբերությունները, քանի որ Թբիլիսին ձգտում էր, ուժեղացնելով Թուրքիայի հետ հարաբերությունները, նվազեցնել Ռուսաստանի ներկայությունը տարածաշրջանում: Բացի այդ, Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ էր, ուստի Թուրքիայի հետ մերձեցումը կօգներ Վրաստանին սերտ հարաբերություններ հաստատել Հյուսիսատլանտյան դաշինքի և

---

[9] **Акаба Н.,** Северокавказский фактор в Абхазо-грузинском вооруженном конфликте 1992-1993 гг., Фактор Северного Кавказа в контексте грузин абхазского конфликта, *Интернейшнл алерт*, Июль 2012, с. 25-32.

[10] **Reynolds M.,** Turkey's Troubles in the Caucasus, *Insight Turkey*, 2008, **10,** 4, 15-23.

առհասարակ Արևմուտքի հետ[11]: Ինչ վերաբերում է Աբխազիային, ապա Թուրքիայում առկա է աբխազական մեծ համայնք և թուրքական հասարակությունը վրաց-աբխազական հակամարտությունում ուներ աբխազամետ դիրքորոշում: Աբխազա-կան համայնքի լոբբիստական խմբերի ակտիվության պատճառով Անկարան հակամարտության սկզբում հանդես չէր գալիս վրացամետ քաղաքականությամբ և երկկողմ հարաբերություններում լարվածու-թյուն էր գրանցվել[12]: Շուտով, տեսնելով Ռուսաստանի ակտիվ ներգրավվածությունը և տարածաշրջանում ազդեցության վերականգնման ռուսական հաջողությունները, Թուրքիան սկսեց բարելավել հարաբերությունները Վրաստանի հետ՝ հայտարարելով, որ հարգում է նրա տարածքային ամբողջականությունը: Իհարկե, սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Թուրքիան մի շարք կոմունիկացիոն և էներգետիկ ծրագրեր ուներ Վրաստանի հետ[13]: Անկարան գիտակցում էր, որ Մոսկվայի ազդեցության ուժեղացման դեպքում վտանգի տակ կարող են հայտնվել իր ծրագրերը, ուստի քայլեր ձեռնարկեց Վրաստանի հետ սերտացնելու իր հարաբերությունները:

Ինչպես Արցախյան հակամարտությունում, այնպես էլ Աբխազականում Մոսկվային հաջողվեց հանդես գալ որպես միջնորդ հակամարտող կողմերի միջև, որն էլ ավելի ամրապնդեց Ռուսաստանի ակտիվությունը և ազդեցությունը տարածաշրջանում: Եթե հակամար-տության առաջին փուլում՝ 1990-ական թվականներին, Հարավային Կովկասում ընթանում էր ռուս-թուրքական մրցակցություն, ապա երկրորդ փուլում՝ 2008թ.-ին, պատկերը միանգամայն այլ էր: Երկրորդ փուլը վերաճեց ռուս-վրացական պատերազմի, որը ոչ թե ռուս-թուրքական, այլ ռուս-ամերիկյան մրցակցության արդյունք էր: Բանն այն է, որ 2003թ. նոյեմբերին տեղի ունեցած «Վարդերի հեղափո-խության» արդյունքում Վրաստանում իշխանության եկան

[11] **Алексанян Л.,** Эволюция турецко-грузинских отношений: новые тенденции (экономический и военно-политический аспекты), *Проблемы постсоветского пространства*, 2017**, 4,** 2, 148-158.
[12] **Çelikpala M.,** From immigrants to diaspora: Influence of the North Caucasian diaspora in Turkey, *Middle Eastern Studies,* 2016*,* **42**, 3, 423-446.
[13] **Aras B., Akpinar P.,** The Relations between Turkey and the Caucasus, *Perceptions*, 2011, **XVI**, 3, 53-68.

ամերիկամետ ուժեր՝ Միխեիլ Սաակաշվիլու գլխավորությամբ: Վրաստանի իշխանությունները բազմիցս հայտարարել էին, որ երկրի ապագան տեսնում են եվրաինտեգրման ուղղությամբ և ցանկանում են անդամակցել Հյուսիսատլանտյան դաշինքին: Արևմուտքն էլ ամեն բան անում էր Վրաստանը Ռուսաստանից «պոկելու» համար: Սա մեծ հարված էր Ռուսաստանի համար. նախ՝ դրա արդյունքում Ռուսաստանի ազդեցությունը կթուլանար Հարավային Կովկասում, երկրորդը՝ ՆԱՏՕ-ն կհասներ Ռուսաստանի հարավային սահմանին: Պարզ էր, որ դա կանխելու համար Ռուսաստանը կդիմեր որոշակի քայլերի: Հենց այդ է պատճառը, որ Ռուսաստանը 2008 թվականին ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո, բաց չթողնելով հարմար առիթը, ճանաչեց ինչպես Աբխազիայի, այնպես էլ Հարավայի Օսիայի Հանրապետությունների անկախությունը: Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը ճանաչելով՝ Մոսկվան ամրապնդեց իր ազդեցությունը Հարավային Կովկասի այդ տարածքներում, սակայն վերջնականապես զրկվեց Վրաստանից, քանի որ վերջինս հրաժարվեց Ռուսաստանից՝ «ընտրելով» Արևմուտքը:

Հետաքրքիր էր ռուս-թուրքական հարաբերություններն օգոստոսյան հնգօրյա պատերազմից հետո: Չնայած հնգօրյա պատերազմը ընթանում էր ռուս-ամերիյան մրցակցության ֆոնին՝ Թուրքիան ևս ակտիվություն էր ցուցաբերում դրանում: Թուրքիայի շահագրգռվածության պատճառն այն էր, որ օգոստոսյան հնգօրյա պատերազմը նոր հնարավորություն ստեղծեց (երկրորդը՝ ԽՍՀՄ փլուզումից հետո) Հարավային Կովկասում ազդեցության հաստատման համար[14]: Եվ պատահական չէ, որ այս պատերազմից հետո շրջադարձային փոփոխություններ տեղի ունեցան ռուս-թուրքական հարաբերություններում: Անկարան չհամաձայնեց ամերիկյան կողմի պահանջին՝ վերանայելու Մոնթրեյի կոնվենցիայի դրույթները, փաստացի Անկարան «աջակցեց» Ռուսաստանին՝ թույլ չտալով թուրքական նեղուցներով ամերիկյան ռազմանավերի մուտքը Սև ծով[15],

---

[14] **Torosyan T., Vardanyan A**., The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, *Geopolitics*, 2015, **20**, 3, 559-582.

[15] **Weiss A., Zabanova Y.,** Georgia and Abkhazia Caught between Turkey and Russia, SWP Comments 54: German Institute for International and Security Affairs, December 2016, pp. 2-3.

ինչը խստորեն դատապարտվեց Թուրքիայի արևմտյան գործընկերների կողմից։

Թուրքիայի վերոնշյալ քայլերը պայմանավորված էին աշխարհաքաղաքական նոր իրողություններով։ Դարասկզբին «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության անցնելուց հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգում զգալի փոփոխություններ տեղի ունեցան։ Թուրքիայի արտաքին քաղաքականությունում առաջ քաշվեց «Ռազմավարական խորություն» դոկտրինը, որի հիմքում ընկած էր Թուրքիան միջազգային հարաբերությունների կարևոր սուբյեկտի՝ հաշխարհային դերակատարի վերածման գաղափարը[16]։ Դրան հասնելու համար, նախ և առաջ, Թուրքիան պետք է վարեր ինքնուրույն և բազմակողմ արտաքին քաղաքականություն։ Հետևաբար, Թուրքիայի համար կարևոր էր մի կողմից՝ իր դաշնակից ԱՄՆ-ի հետ հարաբերությունների զարգացումը, մյուս կողմից՝ տարածաշրջանում կշիռ ունեցող և աշխարհաքաղաքական նոր թափ ձեռք բերած Ռուսաստանի հետ գործընկերային հարաբերությունների հաստատումը։ Մինչ այս ժամանակաշրջանը գոյություն ունեցող ռուս-թուրքական մրցակցային հարաբերությունները սկսեցին վերափոխվել գործընկերայինի, և գրանցվեց բազմակողմ համագործակցության աննախադեպ խորացում։ Այս ամենին նպաստեց այն, որ փոփոխություններ էին եղել Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության օրակարգում ևս։ Դարասկզբին Ռուսաստանը հաղթահարեց հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացով պայմանավորված ներքին և արտաքին մարտահրավերներ, որդեգրեց արտաքին քաղաքականության նոր առաջնահերթություններ, իսկ 2007-2008թթ.-ից վերադարձավ համաշխարհային քաղաքականություն՝ կարողանալով ամրապնդել իր դիրքերը համաշխարհային քաղաքականությունում և վերածվել ուժային ազդեցիկ կենտրոնի։ Այս համատեքստում Ռուսաստանի համար կարևոր էր Անկարայի հետ հարաբերությունների կայունացումը, երբ ստեղծվել էին դրա բոլոր նախադրյալները։

[16] **Walker J.,** Turkey's Imperial Legacy: Understanding Contemporary Turkey through its Ottoman Past, *Perspective on Global Development and Technology*, 2009, **8**, 2-3, 494-508.

Ռուս-թուրքական էներգետիկ մրցակցությունը կասպյան էներգետիկ ռեսուրսների երթուղիների վերահսկման շուրջ

ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությունն էլ ավելի մեծացավ կասպյան ավազանի էներգետիկ ռեսուրսների տեղափոխման ուղիների տարանցիկ գոտի դառնալու հեռանկարով: 1990-ականների սկզբին կասպյան էներգետիկ պաշարների վերաբերյալ պատկերացումները ուտոպիստական էին: Կարծիքներ էին հնչում, որ այն կդառնա երկրորդ Պարսից ծոցը, սակայն հետագայում ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տվյալ ավազանի պաշարների ծավալները չեն կարող համեմատվել Պարսից ծոցի ավազանի պաշարների հետ[17]:

Կասպյան նավթի և գազի տեղափոխման երթուղիների քաղաքականությամբ հետաքրքրված էին տարածաշրջանային և համաշխարհային մի շարք ազդեցիկ տերություններ[18], դրանց թվում էին՝ ԱՄՆ գլխավորությամբ Թուրքիան և ԵՄ-ն, ովքեր ցանկանում էին ամրապնդել իրենց դիրքերը կասպյան ավազանի արևմուտքում, Ռուսաստանը՝ հյուսիսում, Իրանը՝ հարավում և Չինաստանը՝ արևելյան հատվածում: Այնուամենայնիվ, կասպյան ավազանի էներգետիկ ռեսուրսների նկատմամբ առավել ակտիվ շահագրգռվածություն էին ցուցաբերում Ռուսաստանն ու Թուրքիան:

ԽՍՀՄ փլուզումից հետո էներգետիկ ոլորտը դարձավ Ռուսաստան-Թուրքիա աշխարհաքաղաքական պայքարի կարևոր ուղղություններից մեկը: Մոսկվան ու Անկարան ունեին իրենց սեփական պատկերացումները կապիական էներգետիկ ռեսուրսները համաշխարհային շուկաներ արտահանելու վերաբերյալ: Այս պետություններից յուրաքանչյուրն անում էր ամեն բան, որպեսզի էներգակիրները տեղափոխվեն իր տարածքով: Հետագայում իրավիճակն էլ ավելի բարդացավ կասպյան էներգետիկ ռեսուրսների նկատմամբ ԵՄ-ի ցուցաբերած մեծ հետաքրքրության արդյունքում:

---

[17] **Manning R.,** The Myth of the Caspian Great Game and the "New Persian Gulf", *The Brown Journal of World Affairs,* 2000, **7**, 2, 15-33.

[18] **Labban M.,** The Struggle for the Heartland: Hybrid Geopolitics in the Transkaspian, *Geopolitics*, 2009, **14**, 1, 1–25.

Էներգետիկ ոլորտն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Ռուսաստանի արտաքին քաղաքականության օրակարգում[19]: Խորհրդային Միության փլուզման արդյունքում Մոսկվան կորցրել էր իր վերահսկողությունը կասպյան ավազանի էներգետիկ ռեսուրսների նկատմամբ, այդ պատճառով 1990-ական թվականներին սկսեց ակտիվորեն առաջարկել մի շարք նախագծեր՝ կապված էներգակիրների երթուղիների վերաբերյալ, որոնք պետք է անցնեին Ռուսաստանի տարածքով:

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան, օգտագործելով իր աշխարհագրական նպաստավոր դիրքը, ձգտել է դառնալ տարածաշրջանում էներգետիկ ուղիների հանգուցային միջանցիկ կենտրոն[20]: Ավելին, բացի տարանցիկ գոտի լինելուց, Թուրքիան, կասպյան էներգետիկ ռեսուրսներ ներկրելով, կկարողանար բավարարել իր օրեցօր աճող էներգետիկ հսկայական պահանջարկը, որը պակաս կարևոր մարտահրավեր չէ Թուրքիայի համար:

Կասպյան ածխաջրածնային ռեսուրսների արտահանման ուղիների վերաբերյալ առաջարկվել էր մի քանի ծրագիր: Մոսկվան անում էր ամեն բան, որպեսզի կառուցվելիք նոր նավթամուղն անցներ արդեն իսկ գոյություն ունեցող Բաքու-Նովոռոսիյսկ գծով, որտեղից ադրբեջանական նավթը թուրքական նեղուցներով կմատակարարվեր Եվրոպային[21]: Իսկ Թուրքիան Արևմուտքի աջակցությամբ առաջ քաշեց Ռուսաստանը շրջանցող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի նախագիծը, ըստ որի՝ կասպյան նավթային ռեսուրսները Ադրբեջանից Վրաստանի տարածքով կտեղափոխվեին Թուրքիա, իսկ այնտեղից էլ համաշխարհային շուկա[22]: Իհարկե, վերջին տարբերակը կենսական նշանակություն ուներ Անկարայի համար, քանի որ այդ նախագծի արդյունքում թուրքական Ջեյհանը կդառնար նավթային խոշոր կենտրոն, Թուրքիան կվերահսկեր ադրբեջանական նավթային

[19] **Blank S**., Russian Energy and Russian Security, *The Whiteland Journal of Diplomacy and International Relations,* 2011, **12**, 1, 173-188.
[20] **Roberts J.,** Turkey as Regional Hub, *Insight Turkey,* 2010, **12**, 3, 39-48.
[21] **Жильцов С.С., Зонн И. С., Ушков А. М.,** Геополитика Каспийского региона, Мреждународные отношения Изд., Москва, 2003, с. 89.
[22] **Гусейнов В.,** Каспийская нефть, экономика и геополитика, Олма Пресс, Москва, 2002, с. 57.

ռեսուրսները, արդյունքում կամրապնդեր իր դիրքերը Հարավային Կովկասում: Թուրքիայի առաջարկած ծրագրի իրականացմանն ակտիվորեն աջակցեց Արևմուտքը, մասնավորապես ԱՄՆ-ն[23], որը փորձում էր անել ամեն բան տարածաշրջանում Ռուսաստանի դերակատարությունը նվազեցնելու համար:

Սկզբնական շրջանում Ադրբեջանը փորձում էր Մոսկվայի և Անկարայի հետ վարել հավասարակշռված քաղաքականություն՝ կապված նավթային ռեսուրսների արտահանման հետ: 1995 թվականին Ադրբեջանը որոշեց նավթն արտահանել գոյություն ունեցող Բաքու-Նովոռասիյսկ և Բաքու-Սուփսա նավթամուղերով[24]: Բաքվի այս քաղաքականությունը չընկալվեց Անկարայի կողմից, այդ է պատճառը, որ Անկարան սկսեց քայլեր ձեռնարկել՝ խոչընդոտելու համար Ռուսաստանի տարածքով ադրբեջանական նավթի հնարավոր արտահանումը: Այդ քայլերից մեկն էր Թուրքիայի սահմանած նոր պահանջներն իր նեղուցներով էներգակիրների տեղափոխման համար: Թուրքիան սկսեց պնդել, որ նավթային ռեսուրսների արտահանումը սևծովյան նեղուցներով կարող է հանգեցնել էկոլոգիական աղետի Ստամբուլի բնակչության համար[25]:

Ռուսաստանն էլ իր հերթին քայլեր էր ձեռնարկում տապալելու Թուրքիայի նավթային նախագիծը: 1994 թվականին ՌԴ հետախուզության ղեկավար Եվ. Պրիմակովը հայտարարեց, որ Արևմուտքի կողմից ղեկավարվող նավթային գործարքները վտանգ են ներկայացնում Ռուսաստանի ազգային անվտանգության համար: Ապա 1994-ի նոյեմբերին Ռուսաստանի էներգետիկայի նախարար Յ. Շաֆրանիկը հայտարարեց, որ Ռուսաստանը մտադիր է մասնակցելու ԱՊՀ-ում ձեռնարկված բոլոր էներգետիկ նախագծերին, և որ Կասպյան ավազանի պետությունները չեն կարող ինքնուրույն էներգետիկ գործարքներ անել, քանի որ Կասպից ծովը ներկայացնում է մեկ ընդհանուր էկոհամակարգ, որի իրավական կարգավիճակը դեռ

---

[23] **Balcer A.,** The Future of Turkish-Russian Relations: A Strategic Percpective, *Turkish Policy Quarterly*, 2009, **8**, 1, 77-87.

[24] **Griffith B.,** Back Yard Politics: Russia's Foreign Policy toward the Caspian Basin, *Demokratizatsiy*a, 1998, **6**, 2, 426-441.

[25] **Baran Z.,** The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Implications for Turkey, Central Asia-Caucasus Institute and Silk Road Studies Program, 2005, pp. 103-119.

որոշված չէ, բացի այդ նորանկախ պետությունների կողմից մշակած բոլոր էներգետիկ նախագծերն իրականացվելու էին խորհրդային տարիներին կառուցված ենթակառուցվածքներով, ուստի, Ռուսաստանը չի կարող զերծ մնալ այդ գործարքներում մասնակցությունից[26]: Նախարարը նաև զգուշացրեց Ադրբեջանին և Ղազախստանին, որ Կասպից ծովի ռեսուրսների միակողմանի շահագործումը՝ իրավական բաժանման վերաբերյալ համաձայնության բացակայության պարագայում, մեծ վտանգներ և ռիսկեր կարող է պարունակել:[27]

Չնայած Ռուսաստանի ջանքերին՝ խոչընդոտելու Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցմանը, այն ի վերջո իրականություն դարձավ: Ռուսաստանի առաջ քաշած ծրագրի չիրականացմանը նպաստեց չեչենական պատերազմը, քանի որ նավթամուղի որոշ հատվածն անցնում էր հենց Չեչնիայի տարածքով: 2005թ.-ին շահագործման հանձնվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան 1768 կմ երկարություն ունեցող նավթամուղը: Այս նավթամուղի կառուցման արդյունքում թուլացան Ռուսաստանի դիրքերը նավթային համաշխարհային շուկայում[28]:

Բաքու-Թբիլսի-Ջեյհան նավթամուղի կառուցմանը զուգահեռ ընթանում էր նաև Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի կառուցման աշխատանքները, որոնք բարեհաջող ավարտվեցին 2007 թվականին: Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի կառուցումը ևս որոշ չափով էներգետիկ պարտություն էր Ռուսաստանի համար, քանի որ մի կողմից դրա կառուցման արդյունքում կամրապնդվեր Թուրքիայի կշիռը տարածաշրջանում, մյուս կողմից էլ այն հնարավորություն կտար Եվրոպային Ռուսաստանը շրջանցող գազային ծրագրեր առաջ քաշել, չնայած հետագայում պարզ դարձավ, որ կասպյան ավազանի էներգետիկ պաշարները սահմանափակ են և չեն կարող իրական այլընտրանք լինել ռուսական բնական գազին:

---

[26] **Griffith B.,** նշվ. Աշխ.

[27] **Hottelet R.**, Which Way Will the Oil Flow?, *Christian Science Monitor*, October 1995, p. 19.

[28] **Мамедова Н. М.,** Россия и Турция: взаимные интересы, возможности и противоречия, Российско-турецкие отношения: 2002–2012 годы, МГИМО Университет, Москва, 2013, с. 76.

Ռուս-թուրքական էներգետիկ մրցակցության գործում էական դերակատարություն ունի Արևմուտքը, մասնավորապես ԵՄ-ն: Սեփական էներգետիկ պաշարների սակավության պատճառով ԵՄ-ն այսօր աշխարհի ամենամեծ էներգետիկ ռեսուրսներ ներկրողներից է, որի ամենամեծ ներմուծողը Ռուսաստանն է (37%), որին հաջորդում են Նորվեգիան (31.6%), Ալժիրը (12%) և Քաթարը (7%)[29]: Ռուսական բնական գազից էներգետիկ այդքան մեծ կախվածությունը լուրջ մտահոգությունների առիթ էր Բրյուսելի համար: Նույնիսկ 1990-ականների ընթացքում որոշ գիտնականներ ԵՄ-ի վարած էներգետիկ քաղաքականությունը համարում էին միության ամենաթույլ և խոցելի ոլորտներից մեկը[30]:

ԵՄ էներգետիկ քաղաքականությունը սկսեց էականորեն փոխվել դարասկզբին, ինչը պայմանավորված էր ԵՄ ընդլայնմամբ և 2006-2009 թվականներին ծագած ռուս-ուկրաինական գազային ճգնաժամով, ինչի արդյունքում խաթարվել է եվրոպական երկրների գազամատակարարումը[31]: ԵՄ-ն գիտակցեց, որ գոյություն ունեցող մեծ կախվածությունը ռուսական գազից, Ուկրաինայի անհուսալիությունը՝ որպես տրանզիտ երկիր, էներգետիկ պաշարների ներկրման այլընտրանքների բացակայությունը և անդամ պետությունների միջև տարաձայնությունները ԵՄ-ի էներգետիկ քաղաքականության վերաբերյալ լուրջ մարտահրավեր է Բրյուսելի էներգետիկ անվտանգության համար: Ուստի, տրամաբանական է, որ ԵՄ-ի էներգետիկ անվտանգության գործում կասպյան ավազանի պաշարները էական նշանակություն ունեն, քանի որ դիտվում են որպես Ռուսաստանից կախվածության նվազեցման միջոց: Վերոնշյալ դիրքորոշումը ամրագրվեց 2008թ.-ի առաջ քաշված «Հարավային գազային միջանցք» նախաձեռնության շրջանակներում, որը պետք է

[29] EU energy in figures, Statistical pocketbook, 2016, Available at: https://ec.europa.eu/energy/sites/ener/files/documents/pocketbook_energy-2016_web-final_final.pdf (10.09.2020).

[30] **Matláry, J. H.,** Energy policy in the European Union, Basingstoke: Macmillan, 1997, p. 78.

[31] **Siddi M.** The EU's Botched Geopolitical Approach to External Energy Policy: The Case of the Southern Gas Corridor, *Geopolitics*, 2019, **24,** 1, 124-144.

ապահովեր կասպյան և մեձավորարևելյան գազային պաշարների տեղափոխումը դեպի եվրոպական շուկա[32]:

Սկզբնական նախագծի համաձայն՝ «Հարավային գազային միջանցք» գազային ծրագիրը բաղկացած էր լինելու «Նաբուկո», «Թուրքիա-Հունաստան-Իտալիա» (ITGI) (այդ խողովակաշարի Թուրքիա-Հունաստան հատվածի շինարարությունը ավարտվել է 2007 թվականին, մինչդեռ Հունաստան-Իտալիա խողովակաշարի նախագծի ապագան պարզ չէ մրցակցող «Անդրադրիատիկ» խողովակաշարի պատճառով), «Անդրադրիատիկ» (TAP), «Անդրանատոլիական» (TANAP)[33]: Նախագծի առանցքային հատվածը լինելու էր «Նաբուկո» գազատարը, որից կարճ ժամանակ անց հրաժարվեց ԵՄ-ն՝ գազի անհրաժեշտ պաշարների բացակայության պատճառով:

Ռուսաստանը շրջանցող այդ նախագծում առանցքային դերակատարություն պետք է ունենար Թուրքիան, որը փորձում էր օգտագործել Ռուսաստանի և ԵՄ-ի միջև գոյություն ունեցող լարվածությունը: Նախագծում Ռուսաստանի համար առավել վտանգավոր էր «Նաբուկո» խողովակաշարի կառուցումը և Մոսկվան քայլեր ձեռնարկեց՝ կառուցելու համար այլընտրանքային գազատար, որի միջոցով կկանխեր «Նաբուկո» նախագծի հնարավոր կառուցումը: Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ «Նաբուկո» գազային ծրագիրն ուներ աշխարհաքաղաքական բնույթ և դատապարտված էր անհաջողության՝ հաշվի առնելով կասպյան ավազանի էներգետիկ պաշարների սահմանափակ ծավալները, ինչպես նաև քաղաքական և տնտեսական մի շարք գործոններ:

«Նաբուկո» նախագծի ապագայի մշուշոտ լինելը պարզ էր դարձել դեռևս 2006 թվականին: Բանն այն է, որ «Նաբուկո» խողովակաշարի նախագիծը ԵՄ-ի կողմից մշակվել էր դեռ դարասկզբին և նախնական նախագծի համաձայն՝ նախատեսվում էր

[32] European Commission, Second Strategic Energy Review: An EU energy, security and solidarity action plan, COM(2008) 781 final, Brussels 13, November 2008, https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2008:0781:FIN:EN:PDF (12.08.2020)

[33] **Roberts J. M.,** The Black Sea and European energy security*, Southeast European and Black Sea Studies*, 2006, **6**, 2, 207-223.

այս խողովակաշարով Թուրքիայի տարածքով ԵՄ ներմուծել նաև իրանական գազը, սակայն երբ 2006 թվականին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը պատժամիջոցներ սահմանեց Թեհրանի դեմ՝ խոչընդոտելով ԵՄ-Իրան համագործակցությունը գազի ոլորտում, «Նաբուկո» նախագիծն ամբողջովին կորցրեց տնտեսական նշանակությունը[34]: Հետագայում «Հարավային գազային միջանցք» գազային նախագիծը փոփոխությունների ենթարկվեց՝ ի վերջո դուրս թողնվեց «Նաբուկո» նախագիծը: Այդ ծրագիրն այլևս չի կարող առանցքային դերակատարություն ունենալ Բրյուսելի էներգետիկ անվտանգության ապահովման և մատակարարների դիֆերսիֆիկացիայի գործում, քանի որ հիմնված է միայն ադրբեջանական գազային պաշարների վրա, որոնք կազմում են 16 մլրդ խմ, որից 6-ը՝ Թուրքիայում սպառելու, իսկ մնացածը՝ Եվրոպա արտահանելու համար է[35]:

Որպես այլընտրանք «Նաբուկո» նախագծին՝ Մոսկվան 2011 թվականին նախաձեռնեց «Հարավային հոսք» գազատարի կառուցումը, որը կյանքի չկոչվեց, քանի որ Բրյուսելի ակնհայտ ճնշման պայմաններում՝ նախագծի մաս կազմող պետություններից մեկը՝ Բուլղարիան, դուրս եկավ «Հարավային հոսք» ծրագրից՝ փաստացի տապալելով այն[36]: Սակայն Մոսկվան անմիջապես փոխեց գազատարի երթուղին և հայտարարեց «Թուրքական հոսք» գազատարի կառուցման մասին[37], որում Թուրքիայի դերակատարությունը կարևոր էր:

«Թուրքական հոսք» գազատարի կառուցումը կարևոր տեղ ունի ռուս-թուրքական էներգետիկ համագործակցության մեջ: Գազատարի կառուցման մասին հուշագիրը ստորագրվեց 2014 թվականին, համաձայն որի՝ ռուսական «Գազպրոմ» և թուրքական «Բոթաշ» ընկերությունները համատեղ կառուցելու էին 930 կմ երկարություն ունեցող Սև ծովի հատակով ստորջրյա գազատար, որով ռուսական բնական գազը պետք է առաքվեր Թուրքիա, այնուհետև՝ հարավային և

---

[34] **Siddi M.,** նշվ. Աշխ.:

[35] **Թորոսյան Տ.**, **Վարդանյան Ա.,** նշվ. աշխ.:

[36] **Sharples J.,** South Stream - as Gazprom Abandons the Project and Announces a New Gas Pipeline to Turkey, *European Union Foreign Affairs Journal*, January 2015, **1**, 41-55.

[37] **Гянджумян В.,** «Война газопроводов»: о некоторых геополитических последствиях проектов ТАНАП и «Турецкий поток», *Центральная Азия и Кавказ*, 2015, **18,** 3-4, 84-92.

հարավարևելյան Եվրոպա[38]: Նախատեսվում էր շինարարության աշխատանքները սկսել 2015 թվականին, սակայն ռուս-թուրքական հարաբերություններում ռուսական ռազմական ինքնաթիռի խոցումով պայմանավորված քաղաքական ճգնաժամի[39] արդյունքում գազատարի շինարարության բանակցությունները դադարեցվեցին: Վերոնշյալ քաղաքական ճգնաժամի կարգավորման առանցքային շարժառիթներից մեկը հենց էներգետիկ ոլորտն էր իր ռազմավարական և անվտանգային հսկայական նշանակություն ունեցող երկկողմ էներգետիկ գործարքներներով, մասնավորապես այն պարագայում, որ այդ ժամանակաշրջանում թե՛ Մոսկվան, թե՛ Անկարան գտնվում էին քաղաքական և տնտեսական բարդ իրավիճակում:

2016 թվականին երկկողմ հարաբերությունների կարգավորման ֆոնին գազատարի կառուցման բանակցությունները վերսկսվեցին և Ռուսաստանի Դաշնությունն ու Թուրքիան ստորագրեցին «Թուրքական հոսք»-ի կառուցման մասին համաձայանգիրը: Գազատարի կառուցման աշխատանքները բարեհաջող ավարտվեցին 2019թ.-ին՝ շահագործման հանձնվելով 2020 թվականի հունվարին:

«Թուրքական հոսք» գազատարի կառուցումը բխում էր երկու պետությունների ռազմավարական շահերից: Գազատարի կառուցմամբ Ռուսաստանը լուծում էր մի քանի կարևոր հարց: Նախ՝ «Թուրքական հոսքի» կառուցման արդյունքում մեծանում էր Թուրքիայի կախվածությունը ռուսական գազից, ավելին գազատարը որոշ էներգետիկ կախվածության մեջ կդներ նաև հարավեվրոպական պետություններին: Արդյունքում կամրապնդվի Ռուսաստանի դիրքերը համաշխարհային էներգետիկ շուկայում: Գազատարը

[38] Турецкий поток, https://www.gazprom.ru/projects/turk-stream/, (12.08.2020).

[39] 2015-ի նոյեմբերի 24-ին Թուրքիայի ռազմաօդային ուժերը թուրք-սիրիական սահմանին խոցեցին ռուսական Su-24 կործանիչը: Դրան ի պատասխան, Ռուսաստանը Թուրքիայի նկտամամբ կիրառեց տնտեսական մի շարք պատժամիջոցներ, սահմանափակվեց թուրքական ընկերությունների գործունեությունը Ռուսաստանում, դադարեցվեցին դեպի Թուրքիա չարտերային թռիչքները, չեղյալ հայտարարվեց Թուրքիայի քաղաքացիների համար գործող առանց վիզայի մուտքի ռեժիմը: Թուրքիան իր հերթին քայլեր ձեռնարկեց՝ սահմանափակելով ռուսական ռազմանավերի մուտքը Բոսֆորի նեղուց: Երկկողմ հարաբերություններում ի հայտ եկավ 7-ամսյա քաղաքական ճգնաժամ:

հնարավորություն կտա Ռուսաստանին ակտիվացնելու իր էներգետիկ նշանակությունն ու ազդեցությունը[40]: Ի հավելումն վերոնշվածին, ռուսական կողմի համար «Թուրքական հոսքը» ուներ մեկ այլ կարևորություն ևս, այն այլընտրանք էր գազի արտահանման ուկրաինական ուղուն: Մոսկվայի համար Ուկրաինան հուսալի տրանզիտային պետություն չէ դեպի Եվրոպա գազի կայուն առաքման համար:

Շահեկան իրավիճակ էր ստեղծվել նաև Թուրքիայի համար: Բացի երկրի ներսում էներգետիկ պահանջարկը բավարելուց, գազատարի կառուցումը հնարավորություն էր տալիս Թուրքիային ամրապնդելու իր դիրքերը էներգակիրների տեղափոխման խոշոր հանգույց դառնալու գործում, ինչը մեծ կարևորություն ունի Անկարայի համար, քանի որ էներգակիրների տեղափոխման միջազգային հանգույցի վերածվելն, իր հերթին, հնարավորություն կտա Թուրքիային ամրապնդելու իր դիրքերը տարածաշրջանային առաջնորդ դառնալու ուղղությամբ: Տարածաշրջանային առաջնորդի կարգավիճակի Թուրքիան կարող էր հավակնել երեք հարթություններում՝ աշխարհագրական (Հարավային Կովկասում, Մերձավոր Արևելքում), կրոնական (իսլամական աշխարհում) և ռեսուրսային (էներգետիկ ռեսուրսների տեղափոխման ուղիները վերահսկողի կարգավիճակով)[41]: Սակայն աշխարհաքաղաքական զարգացումները ցույց տվեցին, որ Թուրքիան տապալվեց առաջին և երկրորդ հարթություններում, ուստի ստիպված էր կենտրոնանալ երրորդի վրա, իսկ «Թուրքական հոսք» գազատարի կառուցումը լավ հնարավորություն է ռեսուրսային հարթությունում դիրքերի ամրապնդման համար:

Ընդունված է առանձնացնել Թուրքիայով անցնող էներգետիկ միջանցքի երեք ենթահամակարգ՝ ներկասպյան, որն ընդգրկում է էներգետիկ ռեսուրսների տեղափոխումն Ադրբեջանից, Ղազախստանից և Թուրքմենստանից (վերջին երկուսի դեպքում չի արձանագրվել

---

[40] **Мамедова Н. М.,** Россия и Турция: взаимные интересы, возможности и противоречия, Российско-турецкие отношения: 2002–2012 годы, МГИМО Университет, Москва, 2013, с. 76.

[41] **Արշակյան Գ., Եղիազարյան Ա.,** Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում և թուրք-ադրբեջանական հարաբերությունները 2002-2008թթ, *21-րդ դար*, 2012, **6**, 46, 35-54:

որևէ շոշափելի հաջողություն), սևծովյան կամ ռուսական, որն ընդգրկում է գործող «Երկնագույն հոսք» և «Թուրքական հոսք» գազամուղներն ու նավթի փոխադրումները նեղուցներով և մերձավորարևելյան-միջերկրածովյան՝ ընդգրկելով Իրանի, Իրաքի, Արևելյան Միջերկրածովայքի էներգետիկ ռեսուրսների տեղափոխությունը[42]: Սակայն տեսանելի ապագայում այս ենթահամակարգերից առաջինի ու երրորդի կիրառելիության և արդյունավետության մասին վերապահումով պետք է խոսել: Պատճառն այն է, որ ներկասպյան ենթահամակարգի պաշարները սահմանափակ են, իսկ մերձավորարևելյան-միջերկրածովյան ենթահամակարգինը՝ զրոյական, ուստի չեն կարող ամրապնդել Թուրքիայի դիրքերը ռեսուրսային հարթությունում՝ էներգետիկ ռեսուրսների արտահանման ուղիները վերահսկողի կարգավիճակի առումով: Այսպիսով, ի տարբերություն առաջին և երրորդ ենթահամակարգերի, միայն սևծովյան կամ ռուսական ենթահամակարգն է, որն օժտված է բացահայտ առավելություններով: Այս տեսանկյունից նշանակալի է «Թուրքական հոսք» գազատարի դերակատարությունը, քանի որ այն ապահովում և համալրում է Թուրքիայի տարածքով անցնող էներգետիկ միջանցքի սևծովյան ենթահամակարգը:

Երկկողմ էներգետիկ համագործակցության մեջ էական դերակատարություն ունի նաև Թուրքիայի առաջին ատոմակայանի կառուցումը: 2010 թվականին Ռուսաստանի և Թուրքիայի նախագահները ստորագրեցին համաձայնագիր, ըստ որի՝ ռուսական «Ռոսատոմ» ընկերությունը Թուրքիայում պետք է կառուցի 4800 մվտ ընդհանուր հզորություն և 4 ռեակտոր ունեցող ատոմակայան[43]: Շինարարական աշխատանքները սկսվել են 2018-ին և նախատեսվում է ատոմակայանը շահագործման հանձնել 2023թ.: Ատոմակայանի կառուցումը ձեռնտու է թե՛ Ռուսաստանին, թե՛ Թուրքիային: ԱԷԿ-ի կառուցումը

---

[42] **Գրիգորյան Ա.,** Գլոբալ և տարածաշրջանային զարգացումների ազդեցությունը միջազգային էներգետիկ գործընթացներում Թուրքիայի ներգրավվածության վրա, Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, *Վերլուծական տեղեկագիր. Երեք ծովերի համակարգ,* 2016, 9, էջ 98:

[43] **Winrow G.,** Turkey and Russia: The Importance of Energy Ties, *Insight Turkey*, 2017, **19**, 1, 17-32.

կմեծացնի Ռուսաստանի էներգետիկ նշանակությունը տարածաշրջանում: Ըստ երկու պետությունների միջև կնքված համաձայնագրի՝ ատոմակայանը ունեալու է 60 տարվա «տեխնիկական կյանք» /ևս 20 տարով շահագործման երկարացման հեռանկարով/[44], արդյունքում ստացվում է, որ մինչև 2080թ. Ռուսաստանը որոշ չափով ազդեցություն կպահպանի թուրքական էներգաբաշխիչ ցանցի վրա և, ըստ կանխատեսումների, կբավարարի թուրքական էներգետիկ պահանջարկի մոտ 8-10%-ը[45]: Մոսկվայի համար «Աքքույու» ատոմակայանը կարևոր է ոչ միայն նրանով, որ վերջինիս կառուցման արդյունքում մեծանում է Թուրքիայի էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից, այլև նրանով, որ այն Ռուսաստանի կողմից այլ երկրի համար էլեկտրաէներգիայի արտադրության առաջին փորձն է: ԱԷԿ-ի կառուցումը շահավետ է նաև Անկարայի համար: Թուրքիան կկարողանա բավարարել էներգետիկ ռեսուրսների մեծ պահանջարկը, բացի այդ, Թուրքիայում մշտապես կարևորել են ատոմակայան կառուցման անհրաժեշտությունն, ինչը հնարավորություն կտա նվազեցնելու գազի և նավթի պահանջարկից ունեցած պետության կախվածությունը: Ավելին, ատոմակայանի կառուցման համար ռուսական ընկերությունների կողմից 20 մլրդ դոլարի ներդրում էր կատարվելու Թուրքիայում: «Աքքույու» ատոմակայանի և «Թուրքական հոսք» գազատարի կառուցումը ռուս-թուրքական էներգետիկ համագործակցությունը հասցրեց աննախադեպ մակարդակի:

Եզրակացություն

Խորհրդային միության փլուզումից հետո Ռուսաստան-Թուրքիա հարավկովկասյան աշխարհաքաղաքական պայքարի և դրանում առանցքային դերակատարություն ունեցող էներգետիկ մրցակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ

---

[44] Akkuyu NPP Construction Project, http://www.akkuyu.com/index.php, (16.09.2020).

[45] **Aras E.,** The Necessity of Nuclear Energy in Turkey: A comparison eith Hydropower energy, *Energy Sources Part B: Economics Planning and Policy,* 2013, **8**, 2, 107-114.

1. Նոր աշխարհակարգում թե՛ Ռուսաստանը, թե՛ Թուրքիան ակտիվ քայլեր ձեռնարկեցին Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական ազդեցության գոտիների վերաբաշխման ուղղությամբ, ինչը հանգեցրեց աշխարհաքաղաքական մրցակցության գործընթացում ազդեցիկ նշանակություն ունեցող զարգացումների: Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական մրցակցության մեջ զգալի է հակամարտությունների կարգավորման և կասպիական էներգետիկ ռեսուրսների տեղափոխման համար նոր երթուղիների կառուցման գործընթացների նշանակությունը: Չնայած ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասում առաջացած քաղաքական վակուումին, Թուրքիան, չունենալով համապատասխան քաղաքական և տնտեսական ներուժ, չկարողացավ փոխարինել Ռուսաստանին: Հարավկովկասյան թատերաբեմում զգալի կշիռ ունեցող Ռուսաստանը, թեև կորցրեց ազդեցությունը Վրաստանում, սակայն վերադարձավ տարածաշրջան և այդտեղ զբաղեցնում է առավել ազդեցիկ դիրք աշխարհաքաղաքական մրցակցության մեջ ներգրավված երկրների շրջանում: Այդուհանդերձ, Թուրքիան, հավանաբար զգալով, որ մոտ է աշխարհաքա-ղաքական հավասարակշռության հաստատման պահը, ևս մեկ փորձ ձեռնարկեց Հարավային Կովկասում ազդեցությունների վերանայման ուղղությամբ՝ հրահրելով և անմիջական աննախադեպ մասնակցություն ունենալով 2020թ. սեպտեմբերին Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած ռազմական ագրեսիայում:
2. Կասպիական էներգետիկ ռեսուրսների տեղափոխման ուղիների վերահսկման շուրջ առաջացած ռուս-թուրքական մրցակցության սկզբնական շրջանում որոշ հաջողություններ ունեցավ Թուրքիան: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի կառուցումը Թուրքիայի առաջին քայլերից էր էներգետիկ ռեսուրսների երթուղիների միջազգային կենտրոն դառնալու ուղղությամբ: Դա հնարավորություն տվեց Թուրքիային որոշ չափով բարելավելու իր օրեցօր աճող էներգետիկ պահանջարկը՝ ռուսական

աղբյուրների նկատմամբ այլընտրանքային աղբյուրների ներգրավմամբ, ինչպես նաև վերահսկելու ադրբեջանական գազի և նավթի արտահանումը, դրանով իսկ բարելավելու դիրքերը Ռուսաստանի հետ մրցակցության գործընթացում:

3. Ռուս-թուրքական էներգետիկ հարաբերություններն էլ ավելի «խճճվեցին» կասպյան էներգետիկ ռեսուրսների նկատմամբ ԵՄ-ի ցուցաբերած հետաքրքրության արդյունքում: Ռուսական բնական գազից կախվածությունը նվազեցնելու և էներգետիկ անվտանգության ապահովման համար ԵՄ-ն ակտիվորեն առաջ քաշեց մի շարք էներգետիկ նախագծեր՝ կապված կասպյան էներգետիկ պաշարների հետ: Ռուսաստանը շրջանցող նախագծերում առանցքային դերակատարություն պետք է ունենար Թուրքիան, որը, օգտագործելով Ռուսաստանի և ԵՄ-ի միջև գոյություն ունեցող մրցակցությունը, կարողացավ միաժամանակ դառնալ կասպյան և ռուսական բնական գազի արտահանման երթուղիների տարանցիկ գոտի:

4. Աշխարհաքաղաքական իրողություններով պայմանավորված Ռուսաստան-Թուրքիա էներգետիկ մրցակցությունը սկսեց վերափոխվել համագործակցության և վերածվել աշխարհա-ռազմավարական գործոնի՝ կայունացնող դերակատարություն ստանալով երկկողմ հարաբերությունների մերձեցման գործում: Էներգետիկ համագործակցության ոլորտում կարևոր էր «Երկնագույն հոսք», «Թուրքական հոսք» գազատարերի, ինչպես նաև «Աքքույու» ԱԷԿ-ի կառուցումը: Վերոնշյալ էներգետիկ գործարքների արդյունքում Ռուսաստանն «էներգետիկ դիվա-նագիտության» միջոցով հնարավորություն ստացավ մեծաց-նելու ներկայությունը Թուրքիայի էներգետիկ ոլորտում և ռուսական գազը դեպի Եվրոպա տեղափոխելու համար, իսկ Թուրքիան, բացի ներքին հսկայական պահանջարկը բավա-րարելուց, ամրապնդում է իր դիրքերը միջազգային էներգետիկ հանգույց դառնալու գործում: Սակայն 2020թ. սեպտեմբերին Ադրբեջանի ռազմական ագրեսիայի միջոցով Հարավային Կովկասում դիրքերը բարելավելու գայթակղությանը չդիմացած

Թուրքիան վտանգում է իր հարաբերությունները Ռուսաստանի հետ և համատեղ էներգետիկ ծրագրերի իրականացումը:

5. Աշխարհաքաղաքական զարգացումները ցույց են տալիս, որ երկկողմ հարաբերությունների լարվածության դեպքում թե՛ Մոսկվան, թե՛ Անկարան համապատասխան քայլեր են ձեռնարկում հարաբերությունների կարգավորման ուղղությամբ՝ հաշվի առնելով ռազմավարական և անվտանգային հսկայական նշանակություն ունեցող էներգետիկ գործարքները: Հետևաբար, էներգետիկ ոլորտը որոշիչ և շոշափելի ազդեցություն ունի երկկողմ հարաբերությունների վրա և աշխարհաքաղաքական կարևոր լծակ է հանդիսանում երկու կողմերի համար: Այդուհանդերձ, այդ օրինաչափության մեջ կարևոր փորձաքար է Թուրքիայի լայնածավալ ներգրավումը /վարձկան ահաբեկիչներ, ռազմական ավիացիա, բազմատեսակ տեխնիկա, ռազմական մասնագետներ և այլն/ 2020թ. սեպտեմբերին Ադրբեջանի իրականացրած ռազմական ագրեսիայիում:

The Russian-Turkish energy rivalry in the South Caucasus

SYUZANNA MARTIROSYAN

Center of Perspective Researches nd Initiatives, Armenia

The article examines the clash of geopolitical and trade and economic interests of Russia and Turkey in the South Caucasus after the collapse of the USSR, based on the Russian-Turkish rivalry for control over the Caspian energy routes. To understand the real realignment of forces, reference is also made to the impact of the ethno-political conflicts in the South Caucasus on the geopolitical struggle in the region. The analysis shows that in the first decade of the post-Cold War, Turkey succeeded in the Russian-Turkish struggle over control of the Caspian energy transfer routes, which led to tensions in bilateral relations. However, under the new geopolitical realities, the Russian-Turkish energy rivalry gradually transformed into cooperation, and turned into a geostrategic factor, having a stabilizing role in the rapprochement of bilateral relations. The end result of the Russian-Turkish energy cooperation/competition will largely depend on the results of the military aggression unleashed by Azerbaijan against Artsakh in September 2020, with the large-scale direct involvement of Turkey.